

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4**

2013 թ. մարտի 23-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվություն:

/զեկ՝ ՏՖ դեկան Ս.Գ.Ամիրխանյան/

2. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի <<Ֆինանսներ>> ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/զեկ՝ ամբիոնի վարիչ Վ.Ա.Կարապետյան/

3.ԳՊՀ ՏՖ <<Հաշվապահական հաշվառում>> ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/զեկ՝ ամբիոնի վարիչ Հ.Ս.Ղուլոյան/

4. ԳՊՀ ՏՖ <<Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում>> ամբիոնի 2012-2013 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/զեկ՝ ամբիոնի վարիչ Հ.Ս.Զաքոյան/

5.ԳՊՀ ԲՖ օտար լեզուների ամբիոնի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի հաշվետվություն:

/զեկ՝ ամբիոնի վարիչ Գ.Ֆ.Բդեյան/

6.Ընթացիկ հարցեր:

Նախքան օրակարգային հարցերին անցնելը ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը ներկայացրեց Ֆրիտյոֆ Նանսենի անվան հիմնադրամի նախագահ Ֆ. Բախչինյանին: Վերջինս, պարզաբանելով իր գալու նպատակը, ներկայացնում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումը ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանին Նանսենի անվան հուշամեդալով պարգևատրելու մասին, որից հետո տեղի ունեցավ հուշամեդալի հանձնման արարողությունը: Իր ելույթում Ռ.Հակոբյանը շնորհակալություն հայտնեց և ասաց, որ իր

համար մեծ պատիվ է պարգևատրվել այդ մեծ մարդասերի անունը կրող հուշամեդալով, մարդ, որը սատար եղավ հայ ժողովրդին նրա համար ճակատագրական պահին: Հուշամեդալով պարգևատրվել են նաև ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հ.Խ.Հակոբյանը, ԳՊՀ կառավարման խորհրդի նախագահ Հ.Հ.Հակոբյանը:

Ելույթ ունեցավ Հ.Ղաջոյանը:

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանը: Նա նշեց, որ տնտեսագիտական ֆակուլտետ մուտք են գործում նոր տեխնոլոգիաներ և դասավանդման նոր մեթոդներ: Առարկայացանկում ավելացվել են նոր առարկաներ, որոնց դասավանդման համար հրավիրվել են նոր դասախոսներ: Շարունակվում է ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակումը, աշխատանքներ են տարվում կրթության որակի բարձրացման ուղղությամբ: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ուսանողների շարժի, առաջադիմության, հաճախումների, պրակտիկայի կազմակերպման և անցկացման, գրավոր աշխատանքներին և միջոցառումներին վերաբերող հարցերին: Առաջարկվեց քննարկել ֆակուլտետում անգլերենի ժամերի ավելացման հարցը:

Օրակարգի 2-րդ հարցի մասին զեկուցեց <<Ֆինանսներ>> ամբիոնի վարիչ Վ.Կարապետյանը: Հանգամանորեն ներկայացնելով ամբիոնի աշխատանքները՝ Նա կարևորեց տնտեսության ոլորտում տեղի ունեցող փոփոխություններին արագորեն արձագանքելու անհրաժեշտությունը:

ՏՖ <<Հաշվապահական հաշվառում>> ամբիոնի գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ ամբիոնի վարիչ Հ.Ղուլոյանը: Նա ասաց, որ իրենց նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է, որի համար պետք է ջանքեր գործադրել, հաշվի առնել, որ տնտեսությունը, օրենսդրական դաշտը, հաշվարկները փոփոխություններ են կրում: Կատարվել են ծրագրերի, ուսումնական պլանների, ժամաքանակների փոփոխություններ ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում: Նոր, արդիական առարկաներ են մտել ուսպլան, թարմացվել են առարկայական ծրագրերը, ուժադրություն է դարձվում հիմնականում գործնական բնույթի աշխատանքներին: Կարևոր է, որ ուսանողներն օգտագործում են նաև այլալեզու մասնագիտական գրականություն:

Օրակարգի 4-րդ հարցի մասին զեկուցեց ՏՖ <<Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում>> ամբիոնի վարիչ Հր.Զաքոյանը: Իր զեկուցման մեջ նա ուշադրություն էր դարձրել դասավանդման տարբեր մեթոդներ կիրառելու հանգամանքի վրա. պետք է ուսուցման գործընթացում կիրառել աշխատող մեթոդներ: Ուսանողներին ոգևորել է պետք, մղել հողվածներ գրելու, իսկ պահանջկոտ և հետևողական դասախոսներին՝ խրախուսել:

Գ.Բդեյանը ներկայացրեց ԲՖ օտար լեզուների ամբիոնի գործունեության հաշվետվությունը: Նա ներկայացրեց ամբիոնի աշխատանքների ընթացքը՝ ուշադրություն դարձնելով առաջնահերթությունների վրա: Ծրագրերը կազմվում են ըստ մասնագիտությունների,

պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է երիտասարդ կադրերով, կազմակերպվում են խորհրդատվություններ, ամբիոնի դասախոսները մասնակցում են գիտաժողովների և այլն: Ջեկուցողն առաջարկեց ստեղծել լեզվաբանական կամ թարգմանչական կենտրոն:

Նիստի ավարտին ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյանը: Նա ասաց, որ պետք է ուսանողների մոտ աշխատանքների կատարման նոր մեթոդներ մշակել, անհատական աշխատանքները կազմակերպել որոշակի գործնական ու կենսական նշանակություն ունեցող թեմաներով: Դպրոցներում կազմակերպել և անցկացնել մրցութային շարադրություն՝ «Ես սիրում եմ իմ երկիրը» վերնագրով:

Հիմք ընդունելով զեկուցումներն ու ելույթները՝

Որոշեցին՝

1.ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.ՏՖ «Ֆինանսներ» ամբիոնի վարիչ Վ.Կարապետյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

3.ՏՖ «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի վարիչ Հ.Ղուլոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.ՏՖ «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի վարիչ Հ.Զաքոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

5.ԲՖ օտար լեզուների ամբիոնի վարիչ Գ.Բդեյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

6.Կազմակերպել և անցկացնել շարադրության մրցույթ՝ «Ես սիրում եմ իմ երկիրը» վերնագրով:

Գիտխորհրդի՝ նախագահ՝

Ռ. Խ Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան